ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	ՀՕ-31-Ն
Տիպ	Օրենք
Ակտի տիպ	Հիմնական ակտ (04.02.2006-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2006.01.25/5(460) Հոդ.107
Ընդունող մարմին	ՀՀ Ազգային ժողով
Ընդունման ամսաթիվ	16.12.2005
Ստորագրող մարմին	ՀՀ Նախագահ
Ստորագրման ամսաթիվ	16.01.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	04.02.2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի դեկտեմբերի 16-ին

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՀՕ-193) 8-րդ հոդվածում՝

ա) երկրորդ մասում «էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի» բառերը փոխարինել «հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի» բառերով.
բ) երկրորդ մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Էներգետիկայի, էլեկտրոնային հաղորդակցության և արժեթղթերի շուկայի բնագավառներում լիցենզավորման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխանաբար «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց համաձայն ընդունված լիցենզավորման կարգերով:»:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:»:

Հոդված 3. Օրենքի 43-րդ հոդվածում՝
ա) երկրորդ մասի աղյուսակում «ԷՀ» հապավումը փոխարինել «ՀԾԿՀ» հապավումով.
բ) երկրորդ մասի աղյուսակի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

	«10. Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ								
1.	հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի	ՀԾԿՀ	Բ	Ա	Փ	-	Ո	Հ	Վ
2.	ձայնային ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
3.	շարժական կապի ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
4.	հեռագրային կապի ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
5.	տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ	Պ	Ա	-	-	Ո	Հ	Վ
6.	հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում	ՀՌԱՀ	Բ	-	-	Մ	-	-	Վ».

գ) չորրորդ մասում «ԷՀ-Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կառավարող հանձնաժողով» բառերը փոխարինել «ՀԾԿՀ-Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով» բառերով.
դ) չորրորդ մասի վերջին պարբերությունը «մարմինը» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասի աղյուսակի 10-րդ կետում նշված պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ռ. Քոչարյան**

2006 թ. հունվարի 16
Երևան
ՀՕ-31-Ն